2017-18 ուսումնական տարվա ընթացքում ԵՊՀ ուսանողական գիտական ընկերությունն (ՈՒԳԸ) իրականացրել է իր կանոնադրային պահանջներից բխող միջոցառումներ, նպաստել է ուսանողների, ասպիրանտների և երիտասարդ գիտնականների գիտական, կրթական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը, ինչի նպատակով կազմակերպել է 495 միջոցառում, այդ թվում՝ միջազգային գիտաժողովներ, աշխատաժողովներ, սեմինար-քննարկումներ, հանդիպում-դասախոսություններ, մասնագիտական կինոդիտումներ, օլիմպիադաներ, ինտելեկտուալ խաղեր, դատախաղեր, բանավեճեր, գիտաճանաչողական էքսկուրսիաներ և այլն:

2017-18 ուստարում առանձնակի կարևորություն ունեին ԵՊՀ ՈՒԳԸ հիմնադրման 70-րդ տարեդարձին նվիրված միջազգային տարեկան 4-րդ (2-6 հոկտեմբերի, 2017 թ.) և Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադրման 100-ամյակին նվիրված միջազգային տարեկան 5-րդ գիտական նստաշրջանները (16-20 ապրիլի, 2018 թ.): Միջազգային տարեկան 4-րդ գիտական նստաշրջանի ժամանակ ներկայացվել է 345 զեկուցում, որից 201-ը՝ ԵՊՀ (ներառյալ Իջևանի մասնաճյուղը), 108-ը՝ ՀՀ այլ բուհերի և 36-ը՝ արտասահմանյան համալսարանների և գիտահետազոտական կենտրոնների ուսանողների և երիտասարդ գիտնականների կողմից: Միջազգային տարեկան 5-րդ գիտական նստաշրջանի զեկուցումների թիվը շեշտակի աճել է. ներկայացվել է 532 զեկուցում (377-ը՝ ԵՊՀ (ներառյալ Իջևանի մասնաճյուղը), 106-ը՝ ՀՀ այլ բուհերի և 49-ը՝ արտասահմանյան բուհերի ուսանողների և ասպիրանտների կողմից):

ՈՒԳԸ միջոցառումներից կարևոր նշանակություն ունի գիտական աշխատանքներ կատարելու հմտությունների ուսուցման ամենամյա ծրագիրը, որի շրջանակներում ուսանողները ծանոթանում են գիտական հոդված գրելու, դաշտային հետազոտություն իրականացնելու և մեթոդաբանական տեսական ուսումնասիրություններ կատարելու հմտություններին: Ուստարվա ընթացքում Ռոմանագերմանական բանասիրության և Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետների համագործակցության արդյունքնում կազմակերպվել է «Ընդհանուր մասնագիտական անգլերեն» դասընթացը (փետրվար-մայիս, 2018 թ.), Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի և «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամի համագործակցության արդյունքում կազմակերպվել է «Զբոսավարների հմտություններ» խորագրով եռամսյա դասընթացը (մարտ-մայիս, 2018 թ.), Իրավագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ-ի կողմից՝ «Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն»

խորագրով բուհական դատախաղը, Սոցիոլոգիայի ֆակուլտետի ՈՒԳԸ նախաձեռնությամբ՝ «Սոցքեմփ» սոցիալական ամենամյա ոչ ֆորմալ աշխատաժողովը (19 հունիսի, 2018 թ.), Միջազգային հարաբերությունների ՈՒԳԸ ջանքերով՝ պաղեստինա-իսրայելական հակամարտությանը նվիրված «ՄԱԿ մոդել» համաժողովը և այլն:

2017-18 ուստարում ՈՒԳԸ անդամներից շատերն արժանացել են տարաբնույթ մրցանակների: 2017 թ. Էդիկ Հարությունը ՀՀ-ն ներկայացրել է եգիպտական Շարմ Էլ Շեյխ քաղաքում կայացած «ՄԱԿ մոդել» սիմուլյացիոն աշխատաժողովի ժամանակ՝ ճանաչվելով լավագույն պատվիրակ: 2018 թ. փետրվարի 13-ին Վ. Շերենցը, Տ. Դադունցն ու Մ. Մարտիրոսյանը ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հայտարարված հանրապետական մրցույթի շրջանակներում ճանաչվել են հումանիտար և հասարակագիտան ոլորտներում ՀՀ տարվա լավագույն ուսանողներ:

Անցած ուստարվա ընթացքում ՈՒԳԸ մեծ թվով անդամներ մասնակցել են միջազգային գիտաժողովների ու համաժողովների Մոսկվայում, Սանկտ-Պետերբուրգում և Եկատերինբուրգում (ՌԴ), Փարիզում (Ֆրանսիա), Մյունխենում (ԳԴՀ), Վիեննայում (Ավստրիա), Ժեշուվում (Լեհաստան) և այլուր:

ՈՒԳԸ գործուն աջակցությամբ ապահովվել է ԵՊՀ ուսանողների մասնակցությունը ՀՀ պետական բուհերի կողմից կազմակերպված գիտաժողովներին և տարաբնույթ միջոցառումներին: Միևնույն ժամանակ ապահովվել է այլ բուհերի ուսանողների մասնակցությունը ԵՊՀ ՈՒԳԸ-ի կողմից կազմակերպված գիտաժողովներին:

ՈՒԳԸ-ն հաշվետու տարում հրատարակվել է ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին համապատասխանող գիտական հոդվածների 2017 թ. ժողովածուն (194 գիտական հոդված):

ՈՒԳԸ աշխատանքներին մասնակցում է մոտ 1000 ուսանող, որից ՈՒԳԸ կառուցվածքային ստորաբաժանումների անդամ է շուրջ 400-ը: Այլ բուհերից ու գիտահետազոտական կենտրոններից ԵՊՀ ՈՒԳԸ աշխատանքներում ներգրավված է շուրջ 300 սովորող: Հետաքրքրական է, որ ՈՒԳԸ աշխատանքներին անմիջականորեն աջակցող (գիտական հոդվածների ղեկավարում կամ գրախոսում, գիտաժողովների նիստերի նախագահում, սեմինարավարություն, լրացուցիչ դասախոսությունների անցկացում և այլն) դասախոսների թիվը կանոնապես ավելանում է՝ գերազանցելով 500-ը: ՈՒԳԸ հիմնադրման 70-ամյակի տոնական միջոցառումների շրջանակներում կառույցի հետ համագործակցող դասախոսների մասնագիտական և աշխատանքային փորձի, հմտությունների և հիշողությունների վերհանմանն էր ուղղված «Հետադարձ հայացք» ծրագիրը, որի ընթացքում ՈՒԳԸ-ն հյուրընկալել և հարցազրույցներ էր ունեցել ՈՒԳԸ նախկին նախագահներ Կ. Ավագյանի, Ա. Ալեքսանյանի, Ե. Միրզոյանի, Կ. Խաչատրյանի, Մ. Մալխասյանի և Ռ. Մարկոսյանի հետ:

ՈՒԳԸ-ում տեղի են ունեցել նաև կադրային և հաստիքային փոփոխություններ: 2018 թ. մայիսի 8-ին ՈՒԳԸ ԳԽ որոշմամբ ձևավորվել է Թարգմանական հարցերի հանձնաժողով: